ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«5» հունիսի 20 թ. N 81-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետության «ՓԻՇՌՈ ԷԿՍՊՈՐՏ ԱՆԴ ԷՆԵՌԺԻ ՓՐՈՄՈՇՆ ԿՈՄՊԱՆԻ» փակ բաժնետիրական ընկերությանը «Քաջարան 220/110/10 կՎ ենթակայանի միացումը հանգույցի / հանգույցի սխեմայի միջոցով անցումային ցանցին 220 կՎ վերգետնյա էլեկտրահաղորդման մեղրի 1 գծից» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Էլեկտրամատակարարում» ենթատեսակի համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած

պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2028 թվականի փետրվարի 18-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2026-06-05 19:13:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ